

## **Կազմակերպվում է մրցույթ**

### **Անտառօգտագործման տեսակը, ժամկետը, վայրը.**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Սևքարի անտառտնտեսություն» մասնաճյուղի Աջաջրի անտառպետության տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող անտառային նշանակության հողերում հանգստի և զբոսաշրջության կազմակերպման նպատակով անտառային նշանակության հողերից 0,4 հա տարածք (կադաստրային ծածկագիր՝ 11-034-0101-0119) (գործառնական նշանակությունն անտառ, որտեղ առկա են կաղնի, հացենի, բոխի և այլ անտառկազմող ծառաթփատեսակներ) մինչև 60 տարի ժամկետով հանգստի կազմակերպման նպատակով վարձակալության իրավունքով տրամադրելու համար: Անտառային հողի նկատմամբ սահմանափակումներ (ներառյալ՝ սերվիտուտներ) առկա չեն:

**Մրցույթի կազմակերպչի անվանումը, մրցույթի կազմակերպման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, վայրը (հասցեն).**

Մրցույթը կազմակերպում է բնապահպանության նախարարության անտառային կոմիտեն 2018-ի հոկտեմբերի 10-ին: Մրցույթի անցկացման վայրն է ք. Երևան, Արմենակյան 129, 3-րդ հարկ, Անտառային կոմիտե (հեռ.՝ հանձնաժողովի քարտուղար 077 78 05 78 Գ. Թադևոսյան):

### **Մրցույթին մասնակցության հայտերի ընդունման ժամկետը (ժամերն ըստ օրերի).**

Մրցույթի մասնակցության հայտերն ընդունվում են 2018 թվականի սեպտեմբերի 3-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 20-ը (աշխատանքային օրերին ժամը 10<sup>00</sup>-ից 16<sup>00</sup>):

### **Վարձավճարի չափը.**

Վարձավճարի չափը տարեկան կազմում է 192,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

### **Մրցույթին մասնակցության նախավճարի չափը**

Մրցույթին մասնակցության նախավճարի չափը կազմում է 9600 ՀՀ դրամ:

### **Մրցույթին մասնակցության նախավճարի դրամային հաշվեհամարը.**

Մրցույթին մասնակցության նախավճարի դրամային հաշվեհամարն է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հաշվեհամարը՝ Հայէկոնոմբանկ ԲԲԸ, Մյասնիկյան մասնաճյուղ, 163038001166

## **Մասնակիցների կողմից անտառի տարածքին ծանոթանալու օրերը և ժամերը.**

Մրցույթի մասնակիցները կարող են տարածքին ծանոթանալ 2018 թվականի սեպտեմբերի 19-ին ժամը 12<sup>00</sup>-ին:

## **Մրցույթին մասնակցության հայտին կից պահանջվող փաստաթղթերի ցանկը.**

Մրցույթին մասնակցության հայտին կից ներկայացվում են՝

- 1) Մրցույթի մասնակցության հայտ (ձև 2, կցվում է).
- 2) հայտը (ծրարը) ներկայացնելու ժամկետ է համարվում հանձնաժողովի կողմից այն ստանալու օրը և ժամը, որի մասին գրառում է կատարվում հայտի (ծրարի) վրա.
- 3) անտառօգտագործման ծրագիր.
- 4) նախավճարի մուծումը հաստատող փաստաթղթի պատճենը.
- 5) իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար՝ համապատասխանաբար պետական գրանցման կամ պետական հաշվառման համարը.
- 6) ֆիզիկական անձանց համար՝ անձնագրի պատճենը.
- 7) հայտատուի կողմից տրված լիազորագիրը, եթե մրցույթին ներկայանում է նրա լիազորած անձը:

## **Մրցույթի պայմանները, մրցույթի հաղթողին որոշելու կարգը.**

Հանձնաժողովի անդամները մրցույթին մասնակցող հայտատուների կողմից ներկայացված անտառօգտագործման ծրագիրը գնահատում են համաձայն ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 24-ի թիվ 806-Ն որոշման 1-10 բալանոց միավորների համակարգով:

Մրցույթում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որի ներկայացրած հայտի գնահատված միավորների հանրագումարն առավելագույնն է մնացած մասնակիցների միավորների հանրագումարից, բայց ոչ պակաս հանձնաժողովի անդամների կողմից գնահատվելիք առավելագույն միավորների հանրագումարի կեսից:

Հավասար միավորների դեպքում հաղթողը որոշվում է վիճակահանությամբ:

## **Մրցույթի հայտերը ներկայացնելու վայրը.**

Մրցույթի հայտերը ներկայացվում են քաղաք Երևան, Արմենակյան 129, Անտառային կոմիտե:

## **Հայտերի բացման և դրանց ամփոփման նիստերի կայացման օրը և ժամը.**

Հայտերը բացվելու և ամփոփվելու են 2018 թվականի սեպտեմբերի 24-ին 11<sup>00</sup>-ին: